Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝<<ՀՀ Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի «Երաժշտություն» առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթի մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1) Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/

2) Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3) Անձնագրի պատճենը,

4) Ինքնակենսագրություն /Ձև 4/

5)Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/

6) Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

7) Այլ պետությունների քաղաքացիությունը՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք:

8)ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից դեկտեմբերի 29-ը ներառյալ՝ ամեն օր ժամը 10^{00}-15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2020թ. դեկտեմբերի 30-ին, ժամը 14:00-ին, «Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում

Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Արգավանդ, Կենտրոնական փողոց 28:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ /094/ 87-12-02: